ՀՏԴ 37.01
479.243

Մանկավարժություն

Էլլադա Բաղդասարյան
մանկ.գիտ, թեկնածու, դոցենտ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ, ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Հոդվածում քննարկվում է արժեքային վերակառուցումներն ազգային կրթական բարեփոխումների համատեքստում որպես արցախյան շարժման ձեռքբերում :Ազգային արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է կրթական բարեփոխումների հիմքը : Այն ապահովվում է դաստիարակության համակարգում ազգային և համամարդկայինի մեկտեղումը: Հանրակրթական դպրոցում սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու իմաստավորելու և վերաիմաստավորելու սովորողներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր *–Արժեքային, վերակառուցում, ազգային , կրթական , բարեփոխումներ, համատեքստ, արցախյան շարժման, ձեռքբերում :*

Э. З. Багдасарян,
канд. пед. наук, доцент

ВОССТАНОВЛЕНИЕ СТОИМОСТИ В КОНТЕКСТЕ РЕФОРМ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ КАК ДОСТИЖЕНИЕ ДВИЖЕНИЯ В АРЦАХЕ

В статье обсуждается вопрос о восстановлении ценности в контексте национальных реформ образования как достижение Арцахского движения. Формирование национальной системы ценностей является основой реформы образования. Для формирования у учащихся общеобразовательных школ национального духа важно воспитывать в них уважение к культурным ценностям.

Ключевые слова*: случайный, восстановление, национальный, образование, реформа, контекст, движение, достижение*

E.Z. Baghdasaryan,
MD, Associate Professor

COST REBUILDING IN THE CONTEXT OF NATIONAL EDUCATION REFORMS AS ACHIEVEMENT OF THE ARTSAKH MOVEMENT

The article discusses the issue of restoring value in the context of national educational reforms as the achievement of the Artsakh movement. The formation of the national value system is the basis for the reform of education and is a combination of national and universal in the education system. It is important to educate the national spirit and the value system for the education of students in the secondary school.

Keywords: *casual, recovery, national, education, reform, context, movement, achievement*
Department of Pedagogy and Psychology

Դժվար է գնահատել, խոսել անկախության շրջանի ցանկացած երևույթի մասին: Ընկնում ես հուշերի գիրկը, համակվում հպարտությամբ ափսոսանքով, արձանագրելով կորուստներն ու ձեռքբերումները: Հայահալած քաղաքականության ժամանակ հնարավոր չէր նույնիսկ արտաբերել ազգային բառը, որը կարող էր հետապնդումների առիթ հանդիսանալ, մեղադրվելով ազգայնամոլության մեջ, իսկ ազգային արժեհամակարգի ձևավորման մասին խոսք անգամ լինել չէր կարող: Այսօր բոլորս փորձում ենք արձանագրել, վերլուծել արցախյան շարժման ձեռքբերումներն ու նվաճումները: Հենց ազգային արժեհամակարգի ձևավորումն էլ համարվում է, որպես անկախության շրջանի մեծ նվաճում:

Պետության ՝ ազգի անվտանգության ապահովման, Արցախ աշխարհի հզորացման գործում գերխնդիր է դարձել պետական մտածելակերպ ունեցող, ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումն իր համամարդկային և ազգային արժեհամակարգով:

Այսօր մենք հայտվել ենք պատմական իրողության այնպիսի խաչմերուկում, որտեղ միաձուլվում են մեր նախնիներից ժառանգած և սերունդներին շռայլորեն փոխանցված իրական արժեքները: Վերապրելով այս ամենը ՝ փաստում ենք այն ճշմարտությունը, որ այսօր կրթությունը պետք է դառնա մեր նախնիների արյան գնով ձեռքբերված, սրբությամբ պահպանված և մեծ հույսով, հավատով մեզ վստահված ազգային, մշակութային, հավատքի արժեքները: Չէ որ դրանով է պայմանավորված մեր ազգի ինքնությունն ու մեր ապագան:

Ազգային արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է կրթական բարեփոխումների հիմքն է: Անշուշտ, դա արցախյան շարժման ձեռքբերումներից է: Այսօր ազգային դաստիարակության մասին խոսելիս, հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազգային դաստիարակության էության ճիշտ ըմբռնմանը: Ազգային ու համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ ՝ աստիճանաբար ձևավորվելով, որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ընդհանրապես, ճիշտ ըմբռնած ազգային իրական և ճիշտ ընբռնված համամարդկայինի մասն է: Ազգայինը վերաբերվում է տվյալ ազգի հոգեբանության, լեզվի, դավանանքի, առհասարակ ՝ զուտ ազգային արժեքների խտացմանը դրանից բացի ենթադրվում է նաև համամարդկային արժեքների խտացում: Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը:

Հիրավի, ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, գերական ռազմավարության նշանակություն ունեցող հիմնախնդիր է ազգային արժեհամակարգի ձևավուրումն ու զարգացումը:

Ինչպես գիտենք, այսօր վտանգված է սովորողների ազգային գաղափարախոսությունը: Նկատվում է նահանջ որոշ արժեքներից, որոնք անհրաժեշտ են կրթադաստիարակչական համակարգում բովանդակային հագեցվածություն ՝ ազգային մշակութային արժեքներով: Դպրոցի կարևորագույն նպատակներից է ազգային արժեհամակարգի ձևավորումը: Անհրաժեշտ է ազգապահպան գործում վկայակոչել հայոց մեծերին, ովքեր բոլոր դարաշրջաններում ջանացել են իրենց անհատականությամբ, ստեղծագործական արգասիքով, ամրապնդելու ազգային ոգին, հպարտությունը հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը: Ժամանակին ճիշտ է բնութագրվել հայ մեծ լուսավորիչ մանկավարժ Խ.Աբովյանի կողմից ազգային կրթության արժեվորումը՝«Հայ ժողովուրդն ինքնըստինքյան ոչ միայն ամենաքաղաքակրթվածն է, այլև հենց այն ազգությունն է, որի բնավորությունն ու ապրելակերպը նպաստում են, որ նա լուսավորություն տարածի ամենուր, հարևանների մեջ»: Դարերի հոլովույթում պետականազրկված աշխարհասփյուռ հայերն արտերկրում կարողացել են պահպանել ազգային հոգեկերտվածքը, ոգին, դիմագիծը. «Նրանց բարեպաշտ միտքը երբեք չի այլասերվել», «երբեք չի բթացել դեպի կրթությունն ու կատարելագործությունը խոյացող նրանց ոգին»: Տարագրված հայերն ազգային պատվախնդրությամբ, զոհողություններով շարունակել են պահպանել, զարգացնել դարերով սրբացած ազգային արժեքները, բարքերը սովորույթները, ավանդույթները ՝ հիմնելով մշակութային կրթական հաստատություններ, եկեղեցիներ, դպրոցներ…. Հանրակրթական համակարգի բարեփոխումների ոլորտում կարևոր է համարվում արժեհամակարգերի ճիշտ ձևավորումն ու զարգացումը: Այսօր դրա իրականացումը ռազմավարական նշանակություն ունի: Շատ կարևոր է կրթության ողջ համակարգում համամարդկային, ազգային, մշակութային, հոգևոր-բարոյական արժեքների մարդասիրացման և անձնակողմնորոշիչ մոտեցման խնդիրների լուծումը: Մեզ շրջապատող իրականությունը փոխվում է զարմանալի արագությամբ փոխվում են նաև արժեքային կողմնորոշիչները, որոնք մեծ նշնակություն ունեն սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում: Այսօր հանրակրթության ոլորտում հասարակական հարաբերություններում տարբեր երևույթներ կորցնում են իրենց իսկական նշանակությունը: Այդ երևույթները (արժեքները) իմաստավորման և վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն, թելադրված հասարակության բնականոն զարգացմանբ և մարդկանց պահանջմունքներով: Արժեբանության ոլորտում նորովի է կարևորվում այնպիսի ուղղության դերն ու նշանակությունն

ինչպիսինն է մանկավարժական արժեբանությունն իր արժեբանական հիմնական կողմնորոշիչներով:

Շատ կարևոր է իրական արժեբանական արժեհամակարգի ճիշտ ընկալման հիմնահարցերի լուսաբանումը, որով էլ պայմանավորված է շրջապատում իրական արժեքների նկատմամբ ճիշտ ու համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Վերջին ժամանակներում շատ կարևոր է վեր հանել արժեքի հատկանիշները, բացահայտել, արժեքի էությունը, արժեբանական ընկալումները, առանձնահատկությունները, հիմնական բնութագրիչները, հասկացություններն ու գիտական հիմնավորումները:

Հասարակության մեջ տեսականորեն ամրագրված արժեքները վերահիմաստավորվում են մարդկանց առօրյա կյանքում: Այդ ամբողջ գործընթացի իրականացման մոդելը մեր պատկերացմամբ հետևյալն է.

1.Պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքների ամրագրումն ամենուր և հատկապես հանրակրթության ոլորտում

2.Արժեքների ճիշտ ընկալումը

3.Արժեքների իրացման համար երաշխիքների ապահովումը

Այս համատեքստում տեղին ենք համարում կատարել մի շարք կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող շեշտադրում.

Ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը որը և համարվում է հանրակրթության ոլորտի հիմնական գերխնդիրը:

Այսպիսով ազգային արժեհամակարգով ձևավորված սերունդը կունենա արժանապատիվ ապագա: Հավատարիմ մնանք մեր ազգային արժեհամակարգին, ազգային մտածելակերպին և վստահորեն կերտենք փայլուն ապագա, ամրագրելով մեր հաղթանակները:

Այսօր շատ կարևոր է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն երկկողմանի բնույթ ունի. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը , և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը:

Սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը:

Տարրական դպրոցում ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում են դրանց համակարգման հիման վրա: «Ինչպես կեցության ձևերն ու միջոցները, այնպես էլ դրանց արժեքները, գոյություն ունեն անթիվ քանակով»- գրում է Ն.Օ. Լոսսկին [5, 32]:

Ըստ Բ. Ս. Գերշունսկու, մանկավարժ հետազոտողների խնդիրն է, փիլիսոփայական հետազոտությունների հիման վրա գլոբալ, համամարդկային արժեքների վերափոխումն այնպիսի արժեքների, որոնք ձեռք են բերվում կրթության ոլորտում:

Վ. Պ. Զինչենկոն, անձի գործունեության երեք հիմնական բնագավառների առանձնացման հիման վրա, առաջարկում է մանկավարժական գործընթացում իրականացվող հետևյալ արժեքային խմբերը՝ հոգևոր, իմացական, սոցիալական

[3, 8]:

Գիտնական - հետազոտողն այն համոզմանն է, որ դրանք կրթության համակարգում պետք է ստանան տեխնոլոգիական կիրառում: Սակայն այդ խնդիրը դժվար է իրականացնել այնպիսի բնութագրիչների բացակայության պատճառով, որոնք վերաբերում են առանձին արժեքներին, դրանց այս կամ այն խմբին առնչությանը, ինչպես նաև հոգևոր և սոցիալական արժեքների համադրմանը [3, 8]:

Ն. Ս. Ռոզովի կողմից փորձ է արվել մանրամասնորեն դասակարգել կրթության ոլորտի համար նշանակալի արժեքները: Նա առանձնացնում է՝

1.մարդասիրական արժեքներ, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը:

2.Սոցիալական արժեքներ, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական, իրավական ոլորտում:

3.Մշակութային արժեքներ, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին,

բարոյականությանը, ազգային և էթնիկ ավանդույթներին:

4.Էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջակա միջավայրին [9, 124]:

Մշակութային արժեքների խմբում օրինաչափ է գեղագիտական արժեքների առանձնացումը, քանի որ արվեստի, գրականության , կրոնի ազդեցությունն անձի ներաշխարի վրա դեռևս լիարժեքորեն չի բավարարում անձի գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկի նկատմամբ նրա հակումները:

Ս. Ի. Մասլովի կողմից առաջարկվող դասակարգման մեջ առանձնացվում են արժեքների հետևյալ խմբերը. Բարոյական, իմացական, կրոնական, գեղագիտական, սոցիալական, նյութական [10, 32]:

Այսպիսով արժեքները հարմարեցնում ենք կրթության բովանդակությանը և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը, մշակված է նաև տարրական կրթության բովանդակության յուրահատկության և կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Այս մոտեցումն առավելագույնս արտահայտում է մեր կողմից քննարկվող հիմնախնդրի առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը բնութագրվում է միասնական խնդիրների լուծմամբ:

Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ արժեքային կողմնորոշումների ձևավորման առումով այնպիսին են, որ հնարավորություն չեն ընձեռում տարրական դպրոցի ուսումնական գործընթացում ներառել բոլոր արժեքները. Այստեղ առաջնային նշանակություն են ձեռք բերում նրանց հասկացողությանն ու հոգեբանությանը մատչելի, արդիական արժեքները:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակության մեջ, պետք է արտացոլվեն այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են տարրական դասարաններում ուսուցման գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա, հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները:

Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության կազմակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի ու միջոցների օգտագործումը: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով անձի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և՝ վարքային բաղադրատարրերը. Դա բազմիցս արտացոլվում է և՝ մանկավարժական , և՝ հոգեբանական հետազոտություններում:

Իմացական բաղադրատարրերը համոզմունքների, պատկերացումների, կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորվում է իմացական – ճանաչողական գործընթացների , սոցիալական փորձի արդյունքում:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի իմացական ճանաչողական, և վարքային բաղադրատարրերը ներառում են արժեքային օբյեկտի հետ կապված հույզերը, ապրումները, զգացումները:

Վարքային բաղադրատարրը ներկայացնում է անձի վարքային դրսևորումները, դրդապատճառները, կողմնորոշումները, միտումները:

Քանի որ այս բնութագրիչները միասնական գործընթացի բաղադրիչներ են , դրանք փոխպայմանավորված են և անձի կառուցվածքում կայուն հարաբերակցության են ձգտում [1, 5]: Բաղադրատարրերից մեկի փոփոխությունը կարող է հանգեցնել անձի արժեքային ողջ համակարգի փոփոխության [2, 157-164]:

Այսպիսով կարելի է ասել, որ արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում դրական արդյունքների հասնելու համար մեծ նշանակություն ունի նրա բաղադրատարրերից յուրաքանչյուրի վրա արդյունավետ ներգործությունն ու դրանց նպատակային փոխազդեցությունը:

Գիտական շատ հետազոտություններում արծարծվում է այն միտքն, որ կրտսեր դպրոցականների կողմից արժեքների արդյունավետ յուրացմանը նպաստում է տարրական դպրոցի ուսուցչի գործունեության կազմակերպումը, որն անմիջականորեն ներգործում է աշակերտների իմացական և հուզական ոլորտների վրա:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումը սկզբնական շրջանում ձևավորվում է սուր աֆեկտային վիճակների հետևանքով՝ առանց որևէ իմացաճանաչողական էական հիմնավորումների: Այդ տարիքում երեխան բախվում է շատ արժեքների հետ, որոնք անհրաժեշտ է յուրացնել: Ս. Ի. Մասլովը գրում է՝ «Մի շարք պատճառներով անհնարին է իրականացնել արժեքների յուրացումն իմացական գործընթացների միջոցով: Նախ՝ ժամանակը պարզապես չի բավականացնի , երկրորդ՝ շատ արժեքներ անհասանելի են երեխայի գիտակցությանն ու հասկացողությանը: Այդ տարիքում հուզական ընկալման միջոցով երեխան կարող է յուրացնել շատ արժեքներ» [7, 49-50]:

Ըստ Ս. Ի. Մասլովի կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացումն իրականանում է երեք աստիճաններով.

1. առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ. Սկզբում երեխան ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն ՝ իր հուզական- զգայական ոլորտի մակարդակի համեմատ,
2. երկրորդ աստիճանը կապված է ընկալվող օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ,
3. երրորդ աստիճանում իրականանում է կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումների մեջ արժեքի ներմուծման , այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների կողմից արժեքների հուզական ընկալումն իրականանում է ըստ դրանց նշանակության գիտակցման և անձի վարքային դրսևորումների: Արժեքային կողմնորոշումների ձևավորման այսօրինակ հետևողականության և տրամաբանության համաձայն՝ Ս.Ի. Մասլովի կողմից առաջարկվում է տարրական կրթության բովանդակության հուզական-արժեքային բաղադրատարրերի յուրացման ընդհանուր դիդակտիկական մեթոդների այսպիսի համակարգ.

- Համարժեք հույզերի մեթոդ,
- Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդ,
- Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդ:

Համարժեք հույզերի մեթոդն այն է, որ կրտսեր դպրոցականներին մղում է ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ հուզական անդրադարձի և ճանաչողական գործունեության: Այն թույլ է տալիս արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականացնել դրանց յուրացման առաջին աստիճանում [8, 154]:

Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդը հնարավորություն է ընձեռում կրտսեր դպրոցականների կողմից գիտակցել յուրացվող արժեքների նշանակությունը: Այն սովորողների կողմից իրենց ապրումների կամ ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ դրական հարաբերությունների ձևավորմանն ուղղված տարբեր միջոցների կազմակերպումն է: Հույզերի և արժեքների շեշտադրումն իրականացվում է արժեքների յուրացման գործընթացի երկրորդ աստիճանում, որտեղ արժեքների հուզական ընկալումն ամրապնդվում է սովորողների իմացաճանաչողական ոլորտի վրա ակտիվ ազդեցությամբ, որոնցից են ներշնչանքը, համոզմունքը, գնահատումը : Դպրոցական ուսուցման ընթացքում դրանց օգտագործման հնարավորություններն ուսումնասիրվել են տարբեր տեսաբանների ու հետազոտողների կողմից, դաստիարակությանը նվիրված աշխատություններում:

Համոզմունքները, որպես անձի գիտակցված պահանջմունքներ, կապված են իրականության նկատմամբ գիտակցված և քննադատական վերաբերմունքի ձևավորման հետ, ներշնչանքի մեջ խտանում են այս կամ այն իրավիճակի վերաբերյալ տպավորված ապրումները: Գնահատումն անձի գործունեության համար օբյեկտի նշանակության բնութագրումն է՝ նրա

պահանջմունքների բավարարման նպատակով: Այն դրսևորվում է անձի արդեն ձևավորված նախասիրությունների հիման վրա: Արժեքային կողմնորոշումների ձևավորման ընթացքում մեծ դեր է խաղում մանկավարժական գնահատումը, որը կանխատեսում և մեծ չափով նախապատրաստում է սովորողների կողմից արժեքների յուրացման աստիճանը

[4, 97-101]:

Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդի կիրառումը սովորողներին մղում է արժեքների յուրացման երրորդ աստիճանին: Այս մեթոդի էությունն այն է, որ հակադիր արժեքների ցուցադրմամբ սովորողների մեջ համապատասխան հակադիր զգացումներ ձևավորվեն: Դրա շնորհիվ երեխաների մեջ արթնանում են հույզերի, զգացմունքների և դրական արժեքների գիտակցման համոզմունքներ, ապրումներ, որոնք և ձևավորում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգը: Կրտսեր դպրոցականների կողմից արեքների յուրացման այսօրինակ մոտեցումը նպաստում է արժեքային ընտրության առավել գիտակցված և ինքնուրույն իրականացմանը:

Ընտրությունը փոխադարձ բարդ համագործակցային գործընթաց է, որում առկա են հուզակամային և ռացիոնալ բաղադրատարրերը, այսինքն արարքի հուզական ընկալումից մինչև տրամաբանական իմաստավորում: Դա կապակցված է ապրումների ու դրդապատճառների պայքարի հետ և բարենպաստ ազդեցություն ունի արժեքային կողմնորոշումների ավելի խոր ու արդյունավետ ձևավորման վրա

[6, 97-98]:

Տարրական ուսուցման ընթացքում նշված մեթոդներն կիրառվում են՝ հաշվի առնելով առարկաների յուրահատկությունները: Դրանցում առկա նյութում հուզական անդրադարձը և արժեքային շեշտադրումները կարող են արտահայտվել երկակիորեն. նախ ինքնին ազգային մշակույթի արտահայտման ձև է, երկրորդ՝ դա այն աշխարհն է, որը շրջապատում է մեզ իր ողջ բարդությամբ, կապերով ու փոխհարաբերություններով:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունն ենթադրում է այնպիսի արժեքների ամբողջություն, որոնք ընտրված են տարրական դպրոցում ուսուցման նպատակների, կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների և նրանց արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունների համադրման հիման վրա:

Գրականություն

1. Գևորգյան Սեդա-<<Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիրակության գործընթացում>> Երևան 2002թ.(էջ 16, 18),(էջ 26, 30)
2. Վարդումյան Ս., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, «Նոյան տապան», 2005
3. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռ-նարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, «Նոյան տապան», 2005
4. Маслов С.И. Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов-Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999.-130 с./
5. Стефановская Т.А. Педагогика, наука и искуство М.: Педагогика 1998.-с. 23-45
6. Страницы современной педагогики: диалог теории и практики (под ред. С.М. Годника)-Воронеж: ВОНПКРО, 1998.-364 с.
7. Эльконин Д.Б. Избранные педагогические труды М., 1989.
8. Сластенин В.А. Педагогика: инновационная деятельность.-М., Магистр, 1997-221 с.
9. Селевко Т.К. Современные образовательные технологии. М., 1998
10. Алексеев Н.А. Личностно-ориентированное обучение. Вопросы теории и практики.-М., 1995